

Դրամաշնորհային հաշվետվություն մարտ 2022թ.

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	Տավուշի մարզում «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնի ծառայություններ»
Դրամաշնորհի N	ԴՏՊ-1141-11016/22S
Դրամաշնորհատու կազմակերպություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Դրամաշնորհառու կազմակերպություն	«Երիտասարդ Տավուշ» ՀԿ
Ծրագրի իրականացման ժամանակահատված	01 փետրվարի -31 դեկտեմբերի 2022թթ.
Հաշվետու ժամանակահատված	Մարտ 2022թ.
Ներկայացման օր	03 մարտի 2022թ.
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	«Երիտասարդ Տավուշ» ՀԿ նախագահ Մանուշ Մարալյան

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

- 2.1 .1** Օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցության կենտրոն դիմած ընտանիքում բռնության ենթարկված անձանց իրենց իրավունքների մասին տեղեկացում:
- 2.1 .2** Իրազեկման աշխատանքների իրականացում:
- 2.1 .3** Օրենսդրությամբ սահմանված կարգով ընտանիքում բռնության ենթարկված անձանց անհրաժեշտ ծառայությունների մատուցում:
- 2.1 .4** «Թեժ գիծ» ծառայության մատուցում:
- 2.1 .5** Ընտանիքում բռնության ենթարկված, ինչպես նաև ընտանիքում բռնության ականատես երեխաներին օրենսդրությամբ նախատեսված անհրաժեշտ աջակցության տրամադրում:
- 2.1 .6** Օրենսդրությամբ նախատեսված կարգով որոշման կայացում՝ ապաստարանում տեղավորելու մասին:
- 2.1 .7** Օրենսդրությամբ նախատեսված կարգով ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ վիճակագրության վարում:
- 2.1 .8** Ընտանիքում բռնության ենթարկված անձանց մասնագիտական հմտությունների ձեռքբերման, աշխատանքի տեղա-վորման, ինչպես նաև պետությունից և համապատասխան կազմակերպություններից սոցիալական աջակցություն ստանալու հարցերում աջակցում:
- 2.1 .9** Օրենսդրությամբ նախատեսված կարգով ընտանիքում բռնության ենթարկված անձաց իրավական պաշտպանության ապահովում:
- 2.1 .10** Օրենսդրությամբ սահմանված կարգով պետության կողմից տրամադրվող միանվագ ֆինանսական փոխհատուցման ստանալու գործընթացում ընտանիքում բռնության ենթարկվածներին աջակցում և միջնորդության ներկայացում:
- 2.1 .11.** Հաշտեցման իրականացում:
- 2.1 .12** Համագործակցության ապահովում պետական և տեղական մարմինների, ինչպես նաև այլ շահագրգիռ հասարակական կազմակերպությունների հետ:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

- 2.1 .1 Օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցության կենտրոն դիմած ընտանիքում բռնության ենթարկված անձանց իրենց իրավունքների մասին տեղեկացում:**
Մարտ ամսվա ընթացքում աջակցման կենտրոն է դիմել ընտանիքում բռնության ենթարկված 9 կին: Որոնք ստացել են համապատասխան խորհրդատվություն, տեղեկացվել են իրենց իրավունքների , ինչպես նաև կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ: 9 շահառուներից 5 -ի համար կազմվել է անհատական գործ, տրվել է փաստաբանական խորհրդատվություն, իրականացնում ենք սոցիալական դեպքի վարում:
- 2.1 .2 Իրազեկման աշխատանքների իրականացում:**
Ըստ դրամաշնորհի հայտում ներկայացված աշխատանքային պլանի՝ մարտ ամսվա ընթացքում իրազեկում չունենք:
- 2.1 .3 Օրենսդրությամբ սահմանված կարգով ընտանիքում բռնության ենթարկված անձանց անհրաժեշտ ծառայությունների մատուցում:**
Փետրվար ամսվա ընթացքում գրանցվել են 9 ընտանիքում բռնության ենթարկված շահառու: Փաստացի դեպքը վարվում է 5 շահառուի հետ. Գազմվել և համարակարգվել է անհատական գործեր(որոնց մեջ ներառվում է՝ համաձայնություն աջակցման կենտրոնի ծառայություններից

օգտվելու, գաղտնի տեղեկատվության տրամադրման, շահառուի գնահատման և այլ փաստաթղթեր) : Գործերը կարվում են առանձին թղթապանակում:

9-ը շահառուի մատուցվել է սոցիալական և իրավաբանական ծառայությունները. Գրվել է 4 հայց՝ երեխայի տեսակցության, երեխայի բնակության վայրի որոշման, ամուսնալուծության, ալիմենտի վերաբերյալ, տրվել է 9 խորհրդատվություն իրենց տարբեր իրավունքների պաշտպանության մասով և առանձին գրություններ է ներկայացվել դատարան՝ ալիմենտի բռնագանձման վերաբերյալ: 3 շահառուի իրավունքները դատարանում պաշտպանելու համար ապահովվել ենք փաստաբանի ներկայացուցություն դատարանում:

Շահառուների հետ իրականացրել ենք սոցիալական դեպքի վարում. տրվել է ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկվելու վերաբերյալ խորհրդատվություն՝ այժմ շահառուն ստանում է ընտանեկան նպաստ, մեկ շահառուի համար դիմել ենք Բերդ համայնքի խնամակալության և հոգաբարձության խորհուրդ՝ իր և իր երեխայի տեսակցության վերաբերյալ:

Շահառուին ուղղորդել ենք տարածքային զբաղվածության կենտրոն՝ գրանցվելու, աշխատանք գտնելու նպատակով:

Տավուշի մարզպետարանի երեխաների պաշտպանության բաժնում քննարկել ենք շահառուի 5 անչափահաս երեխաներին՝ երկարաժամկետ ՍՕՍ մանկական գյուղ տեղափոխման հարցը, ինչին դեմ ենք և մեր հիմնավորված դիրքորոշումն ենք արտահայտել դեպքի վերաբերյալ.

5 շահառուի տրվել է ընտանեկան բռնության վերաբերյալ խորհրդատվություն

2.1 .4 «Թեժ գիծ» ծառայության մատուցում:

4-ը՝ թեժ գիծ. Գրանցվում է ընտանեկան բռնության դեպքերի համար կազմված բլանկում:

2.1 .5 Ընտանիքում բռնության ենթարկված, ինչպես նաև ընտանիքում բռնության ակնհայտ երեխաներին օրենսդրությամբ նախատեսված անհրաժեշտ աջակցության տրամադրում:

Շահառուների մայրիկների հետ գրուցել ենք ինչպես պետք է վարվել և վերաբերվել բռնարարի հետ նույն միջավայրում ապրող երեխաներին:

2.1 .6 Օրենսդրությամբ նախատեսված կարգով որոշման կայացում՝ ապաստարանում տեղավորելու մասին:

Մարտ ամսվա ընթացքում ապաստարան ուղղորդելու դեպք չենք ունեցել:

2.1 .7 Օրենսդրությամբ նախատեսված կարգով ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ վիճակագրության վարում:

Ընտանեկան բռնության դեպքերի և թեժ գծով ստացված զանգերի վիճակագրությունը ամենամսյա կտրվածքով ներկայացվում է ՀՀ ԱՍՀ նախարարություն՝ էլեկտրոնային տարբերակով. հատուկ մշակված ձևաչափով: Կցում եմ ձևաչափի

հղումը՝ <https://docs.google.com/spreadsheets/d/1aHPVLbx6TGUsu10jkMt6FomQ7UNXg-MM/edit?usp=sharing&ouid=107603481997126612398&rtpof=true&sd=true> :

2.1 .8 Ընտանիքում բռնության ենթարկված անձանց մասնագիտական հմտությունների ձեռքբերման, աշխատանքի տեղավորման, ինչպես նաև պետությունից և համապատասխան

կազմակերպություններից սոցիալական աջակցություն ստանալու հարցերում աջակցում:

1 շահառուի իրավունքը դատարանում հայց ներկայացնելու նպատակով Կանանց աջակցման կենտրոնից վճարվել է 20 000 պետ. տուրք:

1 շահառու ՍՕՍ մանակական գյուղից ստացել է հումանիտար աջակցություն՝ սնունդ, հագուստ, հիգիենայի պարագաներ:

2.1 .9 Օրենսդրությամբ նախատեսված կարգով ընտանիքում բռնության ենթարկված անձաց իրավական պաշտպանության ապահովում:

Մարտ ամսվա ընթացքում կայացել է 3 դատական նիստ, շահառուների իրավունքները դատարանում պաշտպանելու նպատակով ապահովվել ենք փաստաբանի դատական ներկայացուցություն:

2.1 .10 Օրենսդրությամբ սահմանված կարգով պետության կողմից տրամադրվող միանվագ ֆինանսական փոխհատուցման ստանալու գործընթացում ընտանիքում բռնության ենթարկվածներին աջակցում և միջնորդության ներկայացում:

1 շահառուի համար, ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով, դիմել ենք ՀՀ ԱՍՀ նախարարություն:

2.1 .11. Հաշտեցման իրականացում:

Հաշտեցում չենք իրականացրել:

2.1 .12 Համագործակցության ապահովում պետական և տեղական մարմինների, ինչպես նաև այլ շահագրգիռ հասարակական կազմակերպությունների հետ:

Շահառուների շահերը պաշտպանության համար համագործակցել ենք Տավուշի մարզպետատարանի, տարածքային Զին. Կոմիսարիատի, ոստիկանության, ՍՕՍ մանկական գյուղի աջակցման կենտրոնի և այլ կազմակերպությունների հետ:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեղիա պրոդուկտներ և այլն)

Մեր կողմից մատուցվող ծառայությունները տարածում ենք ՀԿ-ի ֆեյսբուքյան էջով՝ <https://www.facebook.com/YoungTavush/>

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Հիմնական խնդիրները ծագել են պետական կառույցների աշխատանքների հետ, որոնք լուրջ չեն վերաբերվում ընտանեկան բռնություններին, ինչի պատճառով չենք կարողանում կամ դժվարանում ենք լուծել շահառուի խնդիրները:
Մարտ ամսվա ընթացքում ՍՕՍ մանկական գյուղը փորձում է երեկարաժամկետ խնամք իրականացնել և իր մոտ տեղափոխել մեր շահառուի 5 անչափահաս երեխաների՝ այն դեպքում, որ ծնողները կան, առողջական խնդիրներ չունեն:
Նշենք նաև, որ ՍՕՍ մանկական գյուղերն ունեն ընտանիքի ամրապնդման ծրագիր, որն ուղղված է երեխաների ընտանիքում ապրելու իրավունքի ապահովմանը:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

- 2.1 .1** Օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցության կենտրոն դիմած ընտանիքում բռնության ենթարկված անձանց իրենց իրավունքների մասին տեղեկացում:
- 2.1 .2** Իրազեկման աշխատանքների իրականացում:
- 2.1 .3** Օրենսդրությամբ սահմանված կարգով ընտանիքում բռնության ենթարկված անձանց անհրաժեշտ ծառայությունների մատուցում:
- 2.1 .4** «Թեժ գիծ» ծառայության մատուցում:
- 2.1 .5** Ընտանիքում բռնության ենթարկված, ինչպես նաև ընտանիքում բռնության ականատես երեխաներին օրենսդրությամբ նախատեսված անհրաժեշտ աջակցության տրամադրում:
- 2.1 .6** Օրենսդրությամբ նախատեսված կարգով որոշման կայացում՝ ապաստարանում տեղավորելու մասին:
- 2.1 .7** Օրենսդրությամբ նախատեսված կարգով ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ վիճակագրության վարում:
- 2.1 .8** Ընտանիքում բռնության ենթարկված անձանց մասնագիտական հմտությունների ձեռքբերման, աշխատանքի տեղավորման, ինչպես նաև պետությունից և համապատասխան կազմակերպություններից սոցիալական աջակցություն ստանալու հարցերում աջակցում:

2.1 .9 Օրենսդրությամբ նախատեսված կարգով ընտանիքում բռնության ենթարկ-ված անձաց իրավական պաշտպանութ-յան ապահովում:

2.1 .10 Օրենսդրությամբ սահմանված կարգով պետության կողմից տրամադրվող միանվագ ֆինանսական փոխհատուց-ման ստանալու գործընթացում ընտա-նիքում բռնության ենթարկվածներին աջակցում և միջնորդության ներկայացում:

2.1 .11. Հաշտեցման իրականացում:

2.1 .12 Համագործակցության ապահովում պետական և տեղական մարմինների, ինչպես նաև այլ շահագրգիռ հասարակական կազմակերպությունների հետ:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Մարտ ամսվա ընթացքում վերը նշված գործողություններ չենք իրականացրել:

03.04.2022

X 

VERIFIED OCSP 03.04.2022 21:45:41 GMT+4

Подписано: MARALCHYAN MANUSH 7901800577